ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Տնօրեն _____ 31 _____ 08 _____ 2023թ.

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Երևանի «Հ. 120 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

1-ին դասարան

Կարինե Սերգեյի Դավթյան

2023-2024 ուսումնական տարի

# ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿԸ

(ազգանունը, անունը, հայրանունը)

| √ | Ազգանուն Անուն Հայրանուն |
|---|---|
| 1 | Աբրահամյան Ինննա Ռոբերտի |
| 2 | Այվազյան Ստեփան Զոհրակ |
| 3 | Աջաբյան Անգելինա Արմեն |
| 4 | Ավագյան Մարիա Սևակ |
| 5 | Դուշիկյան Մարիա Արթուր |
| 6 | Թուխիկյան Հարություն Կարեն |
| 7 | Կարապետյան Ավետիս Էդգար |
| 8 | Հայրապետյան Յեվա Համլետ |
| 9 | Հայրապետյան Սառա Համլետ |
| 10 | Մաթոսյան Դանիել Տիգրան |
| 11 | Մաղաքյան Գրիշա Խաչիկ |
| 12 | Մանասարյան Մարիամ Զոհրաբ |
| 13 | Մանուկյան Արսեն Արման |
| 14 | Մուրադյան Իրինա Միեր |
| 15 | Նազարյան Սամվել Վլադիմիր |
| 16 | Չիչոյան Մանե Ռոման |
| 17 | Սարգսյան Նատալի Նվեր |
| 18 | Վարդանյան Ալեքս Նեսիկի |
| 19 | Վարդանյան Ռուբեն Թաթուլ |

# ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

## 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը)

Iա դասարանը բաղկացած է 19 աշակերտներից, որից 9 տղա, 10 աղջիկ։ Հիմնական ուղղությունը պետք է համարել դասարանի կրթական առաջադիմությունը, կարգապահությունը, ֆիզիկական կոփվածությունը, հաճախումները, աշակերտների գիտելիքների ձեռքբերումը, թանգարաններ, պատկերասրահներ հաճախելը։ Հիմնականում աշակերտները ակտիվ են, հաճախում են դպրոց հաճույքով։

## 2. ՈՒՍԱՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Ուսումնադաստիարակչական նպատակով պետք է աշակերտներին ապահովել դասագրքերով, հաճախակի հետևել դասարանի վարքին, ապահովել աշակերտական համերաշխ կոլեկտիվ և հետևել ուսման առաջադիմությանը։ Հրավիրել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն աշակերտների ակտիվության բարձրացմանը։
Հաճախակի հետևել դասագրքերի պահպանմանը։ Անցկացնել զրույցներ տարբեր դաստիարակչական թեմաներով։ Իմ նպատակն է դաստիարակել նոր սերնդին այնպես, որն ընդունակ լինի իր ավանդը ներդնել նորի ստեղծման գործընթացին։

## 3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայեցի դաստիարակությունը պետք է լինի ոչ թե սոսկ խոսք, այլ՝ երևույթ, որից ծնվում են հայրենասիրությունն ու մարդասիրությունը, ազգասիրությունն ու խիզախությունը։
Յուրաքանչյուր աշակերտի պետք է դաստիարակել այնպես, որ վստահորեն կարողանան իրենց վրա վերցնել ոչ միայն հայ մնալու, այլև հայապահպանության մեջ իրենց ավանդը ներդնելու պատասխանատվությունը։ Ոչ ոք մեր լեզուն մեզ ավելի հարազատ չի դարձնելու, քան մենք ինքներս։
Հայեցի դաստիարակությունը կարևորում է աշակերտների մեջ ազգային, քրիստոնեական ու բարոյական արժեքների դաստիարակումն (հայրենասիրություն, ազատատենչություն, մարտունակություն, քաջություն) ու մշակութային ժառանգականությունը։
Հայի ինքնության հարատևությունը, հայ մնալու երաշխիքը պայմանավորված են հենց դպրոցից։ Դպրոցը միշտ պետք է աչքի ընկի ռազմահայրենասիրական միջոցառումներով, հայրենիքը ճանաչելու համադպրոցական արշավներով։
Հոգևոր դաստիարակության բուն խնդիրը եղել և մնում է հայ կերտելը, հայ պահպանելը։ Այս նպատակով կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոններ։

## 3.1 ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Դպրոցականների դաստիարակության համակարգում կարևոր տեղ է ունի գեղաիտական դաստիարակությունը: Գեղագիտական դաստիարակությունը հատուկ կազմակերպված մանկավարժական գործընթաց է, որն ուղղված է երեխայի գեղագիտական զգացումների, կյանքում և արվեստում գեղեցիկի վերաբերյալ պատկերացումների ձևավորմանը, շրջապատող իրականության հանդեպ գեղագիտական վերաբերմունքի, գեղագիտական գնահատականի ձևավորմանը: Այն նպաստում է երեխայի հուզական ոլորտի զարգացմանը և զգայական փորձի հարստացմանը, ակտիվացնում նրա իմացական գործունեությունը, բացահայտում է նրա ստեղծագործական կարողությունները և խթանում դրանց զարգացումը:

## 3.2 ՌԱԶՄԱ-ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայրենասիրությունը որպես արժեք բազմաբովանդակ է:
Հայրենասիրությունը երեխաների մեջ սերմանվում է ծնողներից, շրջապատից: Հայրենասիրությունը դպրոցում դառնում է ուսուցչի կողմից ասված առանձին խոսք: Սովորեցնել հայրենասիրական բանաստեղծություններ, երգեր:

## 3.3 ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Ազգային դպրոցի ֆիզիկական դաստիարակությունը, որպես ընդհանուր դաստիարակության անբաժանելի մաս, նպատակաուղղված է անձի բազմակողմանի զարգացմանը, ֆիզիկական կատարելագործմանը և կենցաղում առողջ ապրելակերպի հաստատմանը:

## 3.4 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքային դաստիարակությունն անհրաժեշտ է իրականացնել բոլոր դասաժամերին. սովորեցնել աշխատել: Աշխատանքային դաստիարակությունն անհրաժեշտ է իրականացնել բարոյական, քաղաքացիական, ինտելեկտուալ, գեղագիտական, բնապահպանական և ֆիզիկական դաստիարակության հետ միաժամանակ, ինչը պայման կստեղծի անհատի համակողմանի և ներդաշնակ զարգացման համար:

## 3.5 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Բնապահպանական կրթության նպատակն է զարգացնել պատասխանատու վերաբերմունք շրջակա միջավայրի նկատմամբ, որի կառուցվածքի հիմքը բնապահպանական գիտակցության զարգացումն է:

## 4. ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ

Դաստիարակության պրոցեսի մանկավարժական ղեկավարումն ամենից առաջ ուղղված է այն բանին, որ ընտանիքում և հասարակության մեջ ևս շարունակվի և ամրապնդվի այն, ինչ անում է դպրոցը՝ ձևավորելով նոր մարդուն: Ահա այստեղ է դասղեկի աշխատանքի անգնահատելի դերը, եթե այն կազմակերպված է գրագետ և ունի մոտեցման ճիշտ ձև: Վերջինս առանձնակի մեծ դեր է կատարում մատաղ սերնդի դաստիարակության բարդ ու պատասխանատու գործում՝ դպրոցի, ընտանիքի ու հասարակության ջանքերը համախմբելու ուղղությամբ: Նա ժողովրդական լայն մասսաների մեջ մանկավարժական գիտելիքներ է սերմանում, օգնում ծնողներին՝ կատարելու ապագա մարդու դաստիարակության իրենց ակտիվ դերը:
Ուսուցչի՝ առավել ևս դասղեկի, կարևորագույն խնդիրը հասարակությանը երեխաների դաստիարակությանը մասնակից դարձնելն է: Նպատակահարմար եմ գտնում դպրոցում մշտապես կազմակերպելու ծնողական ժողովներ, հանդի-պումներ, խորհրդատվություններ, տարբեր հետաքրքրաշարժ միջոցառումներ, աշխատանքներ, որոնք կնպաստեն երեխաների դաստիարակությանը՝ նրանց ուսումնական յուրաքանչյուր օրը դարձնելով տոն: Դա ևս կնպաստի, ավելի կխորացնի ու կամրապնդի ընտանիք-դպրոց կապը:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

| Ուսումնական շաբաթներ | Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը | Կատարման ժամկետը | Կատարողներ |
|---|---|---|---|
| 1-ին շաբաթ | Զրույց՝ «Գիտելիքի և դպրության օր»: | | դասղեկ |
| 2-րդ շաբաթ | Անցկացնել ծնողական ժողով: Ընտրել դասարանական ծնողական խորհուրդ (նախագահ, երկու անդամներ): | | դասղեկ |
| 3-րդ շաբաթ | Ծանոթանալ աշակերտների հետ, նրանց ծանոթացնել դասարանին և դպրոցին: | | դասղեկ |
| 4-րդ շաբաթ | Զրույց՝ «Անկախության օր»: «Իմ անկախ Հայաստան»: | | դասղեկ |
| 5-րդ շաբաթ | Զրույց՝ «Ինչպես պահպանել դասագրքերը»: | | դասղեկ |
| 6-րդ շաբաթ | Աշակերտներին նստեցնել հաշվի առնելով աշակերտների տեսողությունը, հասակը և լսողությունը: | | դասղեկ |
| 7-րդ շաբաթ | Զրույց՝ «Անվտանգ երթևեկության կանոններ»: | | դասղեկ |
| 8-րդ շաբաթ | Զրույց «Գիրքը մեր բարեկամն է»: | | դասղեկ |
| 9-րդ շաբաթ | Այցելություն դպրոցական գրադարան: Անցկացնել բարձրաձայն ընթերցանություն: | | դասղեկ |
| 10-րդ շաբաթ | Աշակերտների դպրոց հաճախելու ամենօրյա հսկողություն: | | դասղեկ |
| 11-րդ շաբաթ | Զրույց՝ աշակերտների մեջ ձևավորել ընկերասիրություն, ազնվություն: | | դասղեկ |
| 12-րդ շաբաթ | Զրույց՝ «Պահպանել մաքրություն»: | | դասղեկ |
| 13-րդ շաբաթ | Զրույց՝ «Ինչ է ընկերությունը», «Ո՞վ է իմ ընկերը»: | | դասղեկ |
| 14-րդ շաբաթ | Զրույց՝ աշակերտների իրավունքներն ու պարտականությունները: | | դասղեկ |
| 15-րդ շաբաթ | «Ուրախ Ամանոր»: | | դասղեկ |

| | | | |
|---|---|---|---|
| 16-րդ շաբաթ | «Հայոց բանակի օր»։ | | դասղեկ |
| 17-րդ շաբաթ | Զրույց՝ «Ատամների խնամքի մասին»։ | | դասղեկ |
| 18-րդ շաբաթ | «Թումանյանական շաբաթ». Գիրք նվիրելու օր։ | | դասղեկ |
| 19-րդ շաբաթ | «Գիրքը մեր բարեկամն է» ծանոթացնել ճանաչված մանկական գրողների գործերին։ | | դասղեկ |
| 20-րդ շաբաթ | Զրույց՝ «Իմ պահվածքը շրջապատում»։ Քաղաքավարության կանոններ։ | | դասղեկ |
| 21-րդ շաբաթ | Զրույց՝ «Կոնֆլիկտների հաղթահարում»։ | | դասղեկ |
| 22-րդ շաբաթ | Զրույց՝ «Աշխատանքը և նրա նշանակությունը» | | դասղեկ |
| 23-րդ շաբաթ | Զրույց՝ «Դպրոցը քո տունն է»։ | | դասղեկ |
| 24-րդ շաբաթ | Զրույց՝ «Ինչպես ազատվել վատ սովորություններից»։ | | դասղեկ |
| 25-րդ շաբաթ | Զրույց՝ «Սպորտը և նրա նշանակությունը»։ | | դասղեկ |
| 26-րդ շաբաթ | Զրույց՝ «Մենք մեր Հայկի թոռներն ենք» | | դասղեկ |
| 27-րդ շաբաթ | «Շրջակա միջավայր»։ Խնամել դասարանի կանաչ անկյունը։ | | դասղեկ |
| 28-րդ շաբաթ | Զրույց՝ «Ուզում եմ..., Կարող եմ…»։ | | դասղեկ |
| 29-րդ շաբաթ | Զրույց՝ «Սովորենք իրար հասկանանք»։ | | դասղեկ |
| 30-րդ շաբաթ | Տարեվերջյան էքսկուրսիա։ | | դասղեկ |

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ, ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԽՄԲԱԿՆԵՐԻՆ

| Հ. /h | Նախասիրական, առարկայական խմբակներ | Գեղարվեստական-երաժշտական խմբակներ | Մարզական խմբակներ | Այլ խմբակներ |
|---|---|---|---|---|
| 1 | | | | |
| 2 | | | | |
| 3 | | Նկարչ. | | |
| 4 | | | | |
| 5 | | | | |
| 6 | | | | |
| 7 | | | | |
| 8 | | | | |
| 9 | | | | |
| 10 | | | | |
| 11 | | | | |
| 12 | | Պար | | |
| 13 | | | Մարմնամարզ. | |
| 14 | | | | |
| 15 | | | | |
| 16 | | | | |
| 17 | | | | |
| 18 | | | | |
| 19 | | Նկարչ. | | |
| 20 | | | | |

ԴԱՍԱՐԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱԴՊՐՈՑԱԿԱՆ, ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ

| Անցկացման ժամկետը | Միջոցառման անվանումը | Անցկացման տեղը |
|---|---|---|
| 01.09. 2023թ. | «Գիտելիքի օր» | դպրոցի բակ, դասարան |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |

ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ

| Անցկացման օրը, ամիսը, տարեթիվը | Անցկացվող միջոցառման (դասախոսություն, զրույցներ, դիտողական արշավներ, էքսկուրսիաներ և այլն) բովանդակությունը | Ծանոթություն |
|---|---|---|
| | Զրույց՝ «Եկեք ծանոթանանք» | |
| | «Իմ ընտանիքը» | |
| | «Անկախության օր», «Իմ անկախ Հայաստան» | |
| | «Իմ դպրոցը» | |
| | «Մարդիկ մեր շուրջը» | |
| | Ես և իմ անունը. «Ո՞վ և ինչու է ընտրել իմ անունը», «Իմ անվան ծագումաբանությունը և նշանակությունը», «Իմ անվանակից հայտնիները», «Հայտնի ժամանակակից անուններ» | |
| | Անվտանգ երթևեկության պարզագույն և շատ կարևոր կանոնների ուսուցումը խաղերի միջոցով | |
| | Աշակերտների դպրոց հաճախելու ամենօրյա հսկողություն | |
| | Աշակերտների մեջ ձևավորել ընկերասիրություն, ազնվություն | |
| | Քննարկել մարդու վարքագիծը և պահվածքը փողոցում, տրանսպորտում, թատրոնում, պատկերասրահում, գրադարանում հասարակական այլ վայրերում | |
| | «Ինչ է ընկերությունը», « Ո՞վ է իմ ընկերը» | |
| | «Աշակերտների իրավունքներն ու պարտականությունները» | |
| | «Ամանորյա հրաշք» | |
| | «Ու՞մ եմ համարում լավ ընկեր» | |
| | «Հայոց բանակի օր» | |
| | «Թումանյանական շաբաթ». Գիրք նվիրելու օր | |

| | | |
|---|---|---|
| | «Բարև՝, գարու՛ն» | |
| | «Կոնֆլիկտների հաղթահարում» | |
| | «Աշխատանքը և նրա նշանակությունը» | |
| | «Ազգային արժեքներ» | |
| | «Վատ սովորությունների հետևանք». բացահայտել բնավորության դրական և բացասական կողմերը | |
| | «Հասկանանք մեկս մյուսին» /համեմատական թեստ/ | |
| | «Հումորը մարդու կյանքում» | |
| | «Շրջակա միջավայր» | |
| | «Իմ նպատակներն ու երազանքները» | |
| | «Ուզում եմ... Կարող եմ...» | |
| | «Երկիրը, որտեղ կուզեի ապրել» | |
| | «Որտեղ կարելի է խաղալ» | |
| | «Ինչպես եմ անցկացնելու ամառային արձակուրդը» | |
| | Երեխաների պաշտպանության օրը | |

## ԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

| Անցկացման օրը, ամիսը, տարեթիվը | Քննարկվող օրակարգի հարցերը | Ժողովի համառոտ բովանդակությունը | Ծանոթ. |
|---|---|---|---|
| 7.09. 2023թ. | 1.Կազմակերպչական հարցեր։<br><br>2.Դասարանական ծնողական խորհրդի ընտրություն։ | Անհրաժեշտ գրենական պիտույքների առկայությունը։<br>Հիգիենայի պահպանում, հաճախումներ։<br>Առաջադրվեցին թեկնածուներ և կազմակերպվեց ընտրություն։<br>Ներկայացվեց ԴԾԽ-ի գործառույթները։ | Կատարված է։ |
| | | | |
| | | | |
| | | | |

## ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՏ

Դասարանի ծնողական խորհրդի կազմը

Նախագահ՝ Միրզոյան Թամար Գերասիմի

անդամներ՝ 1. Զոհրաբյան Ալինա Վրույրի

2. Ապերյան Անահիտ Հովսեփի

ԴԱՍԱՐԱՆԻ ԲՆՈՒԹԱԳԻՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՎԱՐՏԻՆ

(ուսումնական տարվա ընթացքում կատարած աշխատանքների համառոտ ամփոփում և վերլուծություն)

ՆՇՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

| ամսաթիվը, ամիսը, տարին | կատարված աշխատանքների բնութագիրը (խրախուսանքներ, դիտողություններ) և նշումների բովանդակությունը | նշումները կատարեց |
|---|---|---|
| | | |
| | | |
| | | |